Արձանագրություն թիվ 1

ՀՀ ՇՄ Արթիկ համայնքում 02. 07. 2020 թ. կայացած հանրային քննարկման

02.07.2020թ. *ք. Արթիկ*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2020 թվականի հուլիսի 2-ին ժամը 12:30-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքապետարանում տեղի ունեցավ <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրված 08-002-0251-0025 ծածկագրով 2.97406 հա, 08-002-0251-0119 ծածկագրով 5.08472 հա, 08-002-0251-0118 ծածկագրով 12.4987 հա հողամասերում քարի արդյունահանման նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը, Արթիկ համայնքի ավագանու անդամներ Ռ. Վարդանյանը, Ա. Նիկողոսյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Գ Փթուկյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման նպատակը, այն է՝ նախատեսվող գործունեության համար <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով հանրային քննարկումների անցկացում: Գ. Փթուկյանը ներկայացրեց, որ <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրենը Արթիկ համայնքի վարչական սահմանում գտնվող հանքերում ցանկանում է կազմակերպել տուֆ քարի արդյունահանում: Նա նշեց, որ նշված տարածքներում նախկինում <<Արթիկ Տուֆ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվել է քարի արդյունահանություն, սակայն ընկերության սնանկացումից հետո քարի արդյունահանումը դադարել է: Այժմ այդ տարածքները վերադարձվել են համայնքին, և օրենքով սահմանված կարգով այսօր իրականացվում են հանրային լսումներ՝ վերոհիշատակյալ

հանքատարածքները <<Կլորիկ>> ՍՊԸ-ի կողմից կրկին վերաշահագործման թույլտվություն ստանալու համար: Գ. Փթուկյանը նշեց, որ հանքերի շահագործումով կստեղծվի նոր աշխատատեղեր: Նա նաև նշեց, որ ընկերությունը կմասնակցի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Նա ներկայացրեց, որ համավարակի պայմաններում բնակչության կողմից առավել մասնակցություն ապահովելու նպատակով հանրային քննարկումն անցկացվում է առցանց տարբերակով Արթիկի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, և համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերը, դիտողություններն ու առաջարկությունները կարող են թողնել մեկնաբանություններում, ապա դրանք կբարձրաձայնվեն հանրային քննարկման ընթացքում:

Ելույթ ունեցան.

Համայնքի ավագանու անդամ Ռ. Վարդանյանը, ով նշեց, որ ինքը, որպես համայնքի ավագանու անդամ, կողմ է եղել վարձակալությամբ տրամադրել ընկերությանը ոչ միայն համայնքի բյուջե ակնկալվող դրամական հոսքի, այլև նրա համար, որ հանքերը երկրի հարստությունն է, ընդերք է, և այն պետք է օգտագործվի հանրապետությունում քարի՝ որպես շինանյութի դիֆիցիտը վերացնելու համար, երկրի զարգացման համար: Նա ներկայացրեց, որ նախկինում մեկ տուֆքարի հատի արժեքը 160 ՀՀ դրամ էր, իսկ այսօր 250 ՀՀ դրամ է, որը նաև շինարարություն անող քաղաքացին դժվարությամբ է ձեռք բերում: Այս իրավիճակը բերել է քարի շուկայական գնի բարձրացման: Արթիկի տուֆքարի արդյունահանմամբ մենք կսաստենք այս դեֆիցիտը:

Գ. Փթուկյանը ներկայացրեց ԽՍՀՄ տարիներին Արթիկի քարի արդյունահանման և արտահանման ծավալների մասին, նշելով, որ ժամանակին Հանրապետության քարի պահանջարկի ավելի քան 602%-ը բավարարվել է Արթիկից արտահանվող տուֆով, այժմ այդ ծավալները գրեթե զերոյացվել են, մնացել են մեկ-երկու գործող հանքեր, և այժմ հնարավորություն է ընձեռնվել մեծացնելու տուֆքարի արդյունահանման ծավալները:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Տ. Աղաքարյանը հարցրեց, արդյոք ինչ բնապահպանական հարցերի առջև կկանգնի համայնքը հանքերի վերաշահագործմամբ:

Գ. Փթուկյանը պատասխանեց, որ հանքերը ժամանակին շահագործվել են, և այստեղ լուրջ վնասներ շրջակա միջավայրի վրա չկա, թեպետ դա կորոշի փորձաքննությամբ: Սակայն հանքերը բնակելի հատվածից գտնվում են մոտ 4 կմ հեռավորության վրա, բացի այդ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ իրականացվող <<Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում>> պիլոտային ծրագրով քաղաքի արևելյան հատվածում կստեղծվի բուֆերային գոտի, որը կպաշտպանի քաղաքը Արագածից եկող քամիներից և հանքերից բարձրացող փոշուց:

3. Տ. Չարչյանը հարցրեց, որքան գումար է պետբյուջե մոտք գործելու նշված տարածքների շահագործման համար:

Գ. Փթուկյանը պատասխանեց, շահութահարկի, բնապահպանական վճարների, լիցենզիայի հարկի տեսքով են լինելու պետբյուջեյի գնացող միջոցները:

Ռ. Վարդանյանը հավելեց, որ ծավալներից կախված՝ պետբյուջե մուծվելու է տարեկան մինչև 50 մլն ՀՀ դրամ, իսկ համայնքային բյուջե՝ մոտ 1 մլն ՀՀ դրամ, բացի այդ ընկերությունը նաև համայնքում իրականացնելու է բարեգործական միջոցառումներ:

Գ. Փթուկյանը նաև ներկայացրեց, որ այս տարի համայնքում տարբեր ծրագրերով իրականացվելու են երկրորդական փողոցների տուֆքարով սալապատում, սակայն համայնքում տուֆ քարի բացակայության պատճառով առաջացել են դժվարություններ: Այս տեսակետից քարի արդյունահանում կազմակերպելն անհրաժեշտություն է: Քարի արդյունահանման վերաթույլտվությունն այդ տեսանկյունից կբերի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Տ. Չարչյանը նշեց, որ առցանց հանրային քննարկման հեռարձակմանը հետևում են մոտ 280 օգտատեր, սակայն հարցադրումներ, դիտողություններ և առաջարկություններ օնլայն հարթակից չեն հնչեցվել:

Գ. Փթուկյանը, ամփոփելով հանրային քննարկումների արդյունքները, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին ներկա գտնվելու համար, հավելելով, որ սա նախնական քննարկումներ են: Այս թեմայի շուրջ հանրության հետ առաջիկայում դեռևս ակնկալվում են 3 քննարկումներ, և հորդորեց բնակիչներին ավելի ակտիվ լինել:

Քննարկման արդյունքում տրվում է նախնական համաձայնություն <<Կլորիկ>> ՍՊԸ-ի կողմից Արթիկի տուֆի հանքավայրի արևելյան տեղամասի շահագործման համար:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու և վարող
համայնքի ղեկավարի խորհրդան՝ _____ Գ. Փթուկյան

Ձեռնարկող՝ <<ԿԼՈՐԻԿ>> ՍՊԸ-ի տնօրեն _____ Տ. Պետրոսյան

Հանրային քննարկումների քարտուղար՝
Արթիկի համայնքապետարանի քարտուղարության
բաժնի գլխավոր մասնագետ, իրավաբան՝ _____ Տ. Աղաքարյան

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

<<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրված 08-002-0251-0025 ծածկագրով 2.97406 հա, 08-002-0251-0119 ծածկագրով 5.08472 հա, 08-002-0251-0118 ծածկագրով 12.4987 հա հողամասերում քարի արդյունահանման նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

02.07.2020 թ. ժամը 12:30-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	0-93 74 38 39	[illegible]	[signature]
2	[illegible]	0-98-99-27-37	[illegible]	[signature]
3	[illegible]	093070748	[illegible]	[signature]
4	[illegible]	093 200-750	[illegible]	[signature]
5	[illegible]	093 44-91-00	[illegible]	[signature]
6	[illegible]	093-138-018	[illegible]	[signature]
7	[illegible]	094 89-83-69	Արթիկի բնակիչ	[signature]
8	[illegible]	098 77 02 44	[illegible]	[signature]
9	[illegible]	055-74-58-41	[illegible]	[signature]
10	[illegible]	093 01.1203	Արթիկի բնակիչ	[signature]
11	[illegible]	099141618	[illegible]	[signature]
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				